«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Աշականի ուսուցման իմ փորձը --------- ԱՌԱՐԿ Ա հայոց լեզու---------- ՀԵՂԻՆԱԿ Նազիկ Չոփիկյան----------
---------- ՄԱՐԶ Շիրակի մարզ , ք. Արթիկ----------
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Արթիկի 3-րդ ավագ դպրոց----------

1
2022

# Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------
-3 ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ. ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ---4
ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ----------5

ԱԾԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ----------8

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ-----11
ՀԱՎԵԼՎԱԾ----------17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------24
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------25



# Ներածություն

Աճող սերնդի կրթվածության և արժեհամակարգի ձևավորվածության ցուցանիշը պայմանավորված է մանկավարժների մեթոդական-մասնագիտական պատրաստվածության, դասավանդման կարողությունների և հմտությունների որակով: Ուսուցման և ուսումնառության արդյունավետության ապահովման երաշխիք է ուսուցչի

խորագիտակության և կոմպետենտության աստիճանը. գործընթացի ճշգրիտ պլանավորումը, կազմակերպումը, գիտելիքի փոխանցման, դրա ինքնուրույն ձեռքբերման ուղիների մատնանշումը, սովորողների կենսականորեն անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորվածությունը փաստում են մանկավարժական համակարգված գործունեության մասին:

Մանկավարժական տեխնոլոգիաների, փոխներգործուն ինտերակտիվ մեթոդների նկարագրությունները նպատակ չունեն առաջարկելու ուսուցման կազմակերպման հստակ դեղատոմսեր, բայց կարող են նախանշել դասավանդման արդյունավետության ապահովման բնութագրիչները:

Կրթությունը մարդու իրավունքներից մեկն է: Այն նպաստում է՝

✔Մարդկանց հայացքների փոփոխությանը
✔Քննադատական մտածողության զարգացմանը
✔Գիտելիքների ձեռքբերմանը
✔Հմտությունների, կարողությունների և արժեքների ձևավորմանը:

Վերջիններիս իրականացմանն էլ նպաստում է նոր կրթական տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը:



## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ. ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Առարկայի հարաբերականորեն կայուն հատկանիշ ցույց տվող երկու խոսքի մաս կա՝

ածական և թվական: Ածականի տեղը խոսքի մասերի համակարգում և մասնավորապես առարկայի կայուն հատկանիշ ցույց տվող խոսքի մասերի խմբում որոշելու համար անհրաժեշտ է վեր հանել նրա յուրահատկությունը:

Յուրաքանչյուր ածական, դրվելով գոյականի վրա, արտահայտում է նրա ցույց տված առարկայի որևէ հատկությունը (ներքին կամ արտաքին): Օրինակ՝ գեղեցիկ տեսարան, համեստ մարդ, ընդարձակ սրահ, չարաճճի երեխա, թատերական նեկայացում, լեռնային ծաղիկ կապակցություններում ընդգծված ածականներով բնորոշվում է համապատասխան առարկան այս կամ այն հատկանիշով: Մինչդեռ առարկայի անվան վրա թվական դնելով՝ մենք չենք բնորոշում այդ առարկան ոչ բովանդակությամբ, ոչ ձևի տեսակետից: Դա է պատճառը, որ բոլոր առարկաները, անկախ իրենց բնույթից, կարող են իրենց անվան վրա կրել միևնույն թիվը.

Ինչպես՝մեկ (ութ, հազար) գիրք, (մարդ, սրահ, երեխա, ներկայացում, ծաղիկ): Ածականով արտահայտված բնորոշման հետ հիշյալ կարգի փոփոխություններ կատարել հնարավոր չէ: Ինչպես երևում է ածականով արտահայտված հատկանիշը առարկայի համար բնութագրող արժեք ունի: Այսպիսով ,ածականները առարկան բնութագրող բառեր են: Իր իմաստային այս հատկանիշը ածականը դրսևորում է՝ սովորաբար դրվելով առարկայի անվան՝գոյականի վրա, որ սակայն չի բացառում ածականի հանդես գալը նաև այլ կիրառություններով.այն է՝ստորոգելիական վերադիր, պարագա:

Ստորոգելիական վերադրի պաշտոնով ,ինչպես հայտնի է, կարող են հանդես գալ տարբեր խոսքի մասեր,և այդ դերը որևէ մեկ խոսքի մասի համար տիպական համարել չի կարելի:Ինչ վերաբերում է ածականի պարագայական կիրառությանը,պետք է նշել,որ նախ այդ պաշտոնով կարող են հանդես գալ միայն որակականները,այն էլ՝ոչ բոլորը:Օրինակ՝ Նա հիանալի պատասխանեց:Դու խելոք վարվեցիր:Արամը տխուր հեռացավ:Այսպիսի կիրառությունները ածականի և մակբայի կիրառական հարաբերակցության արտահայտություն են:Ածականն ու մակբայը իրարից տարբերվում են նրանով, որ առաջինի համար բնորոշ է առարկայի հատկանիշ ցույց տալը,իսկ երկրորդի համար՝ առարկայի հատկանիշի հատկանիշ ցույց



տալը:Մակբայը բուն առարկայի վրա դրվել չի կարող:Սակավաթիվ մակբայներ կարող են

դրվել այնպիսի գոյականների վրա,որոնց մեջ կա հատկանիշի իմաստ:Ածականներին հարաբերակից են նաև որոշ դերանուններ,որոնք նույնպես դրվում են առարկայի անվան վրա:Այդպիսիք են այսպիսի,այդպիսի,այնպիսի,նույնպիսի,որոշ,որևէ և այլն:

Ածականները այս և նման դերանուններից տարբերվում են նրանով,որ եթե վերջիններս հատկանիշ են նշում ամենաընդհանուր ,չտարբերակված ձևով, ապա ածականները հատկանիշի տարբերակված իմաստ են արտահայտում,անվանում են այս կամ այն հատկանիշը:

## ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ածականը կազմության տեսակետից շատ հարուստ է ու բազմազան:Հայերենի բառակազմության տարբեր եղանակներն իրենց տարբեր դրսևորումներով դեր ունեն ածականի կազմության մեջ:

Ածականների կազմությանը մասնակցում են մեծ թվով ածանցներ՝ ան-,ապ-,դժ-,տ-,առ-,արտ- ,դեր-,հակ-, հար- ներ-,ստոր-,տար-,ատ-,երեն-,եցին-,ին-,կոտ-,ական,այինն:

Ածականները ըստ կազմության լինում են `

Պարզ (արմատական )ծուռ,կարծր,խոր,դառը,սև

Բաղադրյալ

Բաղադրյալ ածականները լինում են՝

1.Ածանցավոր՝ անկիրթ,կարմրավուն,մայրական

2.Բարդ `լայնարձակ,եռագլուխ,կարճատև,նորանոր

3.Բարդ ածանցավոր՝ հարթավայրային,հրացանավոր,անկարեկից



Ածականակերտ ածանցներ

Այս ածականների մեծ մասով կազմվում են նաև այլ խոսքի մասեր ,և այդ պատճառով այդպիսի ածականները չեն կարող արժեքավորվել ածականի խոսքի մասային, ձևային հատկանիշ:Նշված ածականների մեջ կան այնպիսիները, որոնք բնորոշ են ածականին,քանի որ դրանցով միայն կամ հիմնականում ածականներ են կազմվում:Դրանք բուն ածականակերտ ածանցներն են:

Այդպիսիք են ժխտական նախածանցները,որոնք այլ խոսքի մասերից կազմում են ածականներ:Դրանք են՝

Ան-ածական է կազմում՝ ա)գոյականից բ)բայարմատից,բայահիմքից գ)ածականից օրինակ՝անգութ,անգին,անգործ,անօգուտ,անվճար,

անաշխատունակ,անխոհեմ,անբուժելի

Ապ-ապաբախտ,ապաշնորհ,ապերջանիկ,ապօրինի

Դժ-դժբախտ,դժգույն,դժգոհ,դժկամ

Տ-տգետ,տկար,տձև,տմարդի

Ժխտական նախածանցով կազմված ածականին կարող է ավելանալ այլ խոսքի մաս ,կերտել վերջածանց և կազմել համապատասխան խոսքի մաս:Դա հիմք չի տալիս կասկածի տակ առնելու ժխտական նախածանցների ածականակերտ դերը ,քանի որ դրանք,իրոք, այլ խոսքի մասերից ածական են կերտում.այլ բան է ,որ ուրիշ ածանցներ այդ ածականներից կարող են կազմել այլ խոսքի մասեր .

Օրինակ՝

միտք-անմիտ-անմտություն-անմտորեն

խեղճ-անխիղճ-անխղճություն

հոգ-անհոգ-անհոգություն-անհոգաբար



ձև-տձև-տձևություն

Բուն ածականակերտ վերջածանցներով հիմնականում ածականներ են կազմվում:Դրանք են՝

Ային- որը տարածական ժամանակային ու առարկայական տարբեր կարգի հարաբերություններով ձևավորում է հատկանիշի իմաստ: Օրինակ՝ ամառային,անձրևային,հարավային,մթերային

Անի-գեղանի,պիտանի,թերթանի,գծանի,ոտանի

Եղ-ահեղ,գունղ,զորեղ,թիկնեղ

Կոտ-ամաչկոտ,ալարկոտ,պարծենկոտ

Լիկ-կարճլիկ,պստլիկ,թմբլիկ,գնդլիկ,թխլիկ

Ական-հայրական,վճռական,հայրենական,մխիթարական

հայկական,վրացական,ասիական

Ի-ա)նյութի անունից կազմում է ածականներ,որոնք ցույց են տալիս տվյալ նյութից պատրաստված,կազմված լինելը.օրինակ՝ առածանի,երկաթի,փայտի,կավի

Բ)գոյականներից,ածականներից կազմում է ածականներ,որոնք արտահայտում են որևէ բանի հատուկ լինելու,որևէ հատկություն ունենալու իմաստ. ինչպես՝ աղի,վայրի,հարգի,կթի,վաղեմի,այլազգի,արդի

.Ի ածանցով կազմվում են նաև գոյականներ,մասնավորապես ծառանունները՝կաղնի,սոճի,թխկի:

Ածականներն իրենց արտահայտած իմաստով բազմազան են.նրանք տարբեր կողմերից բնութագրում են առարկան:Այսպես պայուսակ առարկան կարելի է բնութագրել հետևյալ ածականներով.աշակերտական,կաշվե,լավ,գեղեցիկ,տգեղ,մեծ,սև,կապույտ,թեթև:

Մյուս բոլոր ածականները, չնայած իրենց իմաստային բազմազանությանն ու տարբերություններին,ունեն այն հիմնական ընդհանրությունը,որ նախորդի պես միջնորդավորված հատկանիշ չեն արտահայտում ,նրանց իմաստը մի այլ առարկայի հետ ունեցած հարաբերությամբ չի ձևավորվում :Նրանք արտահայտում են առարկային ինքնին հատուկ,չմիջնորդավորված հատկանիշի իմաստ: Ըստ իմաստի բնույթի `ածականները լինում են երկու տեսակ `որակական ու հարաբերական:

Որակական ածականներն արտահայտում են առարկայի ինքնին ունեցած,չմիջնորդավորված որակական հատկանիշ:

Որակական ածականներն անվանում են `

.Առարկաների արտաքին-ձևային հատկանիշներ.մեծ,փոքր,ծուռ,թեք,բարակ,հաստ .Առարկաների արտաքին-ձևային հատկանիշներ.մեծ,փոքր,ծուռ,թեք,բարակ,հաստ Առարկաների ներքին հատկանիշներ.քաղցր,թթու,ցուրտ,ջերմ

Գունային հատկանիշներ.կարմիր,սպիտակ,դեղին.

Մարդկանց մտավոր – բարոյական , խառնվածքի և այլ հատկանիշներ՝ ագահ,համեստ,հեզ,դաժան ուշադիր,նենգ

Հարաբերական ածականները ցույց են տալիս այլ առարկայի հարաբերությամբ միջնորդավորված հատկանիշ:Այսպես աշակերտական համազգեստ ,փայտյա դուռ,լեռնային կլիմա,գարնանային արձակուրդ :

Նշված հիմնական հատկանիշներից բացի և դրանցով պայմանավորած `որակական և հարաբերական ածականներն ունեն այլ յուրահատկություններ ևս:

Դրանք են՝

Որակական ածականները ունենում են համեմատության աստիճաններ,իսկ հարաբերական ածականները՝ոչ:

Եթե օրինակ պայուսակի որակական տվյալ հատկանիշը կարող է ունենալ տարբեր չափեր՝լավ,ավելի լավ,ամենալավ,մեծ,ավելի մեծ,ամենամեծ և այլն,ապա նրա ասենք,կաշվից պատրաստված լինելու տարբեր աստիճանների գաղափարը սպասելի չէ,քանի որ տվյալ դեպքում գործ ունենք մասնավոր առարկայական իմաստի հետ:

Հարաբերական ածականները միշտ բաղարյալ են և առավելապես ածանցավոր,ըստ որում նրանց մեջ որոշակիորեն տարբերվում են բաղադրիչները,մինչդեռ որակական ածականների կազմությունը այսպիսի պայման չունի: Որակականները կարող են լինել պարզ (մեծ,փոքր,թեթև),բարդ(մեծամիտ,հաղթանդամ),

ածանցավոր (վախկոտ,վստահելի,ուժեղ)

3.Որակական ածականները կարող են ստանալ նվազական-փաղաքշական ու նման այլ ածանցներ և տվյալ հատկանիշն արտահայտել համապատասխան իմաստային նրբերանգներով.ինչպես՝փոքր-փոքրիկ,մանր-մանրիկ,ցածր-ցածրիկ,կլոր-կլորիկ

4. Որակական ածականները ունենում են իրենց հականիշը ՝ թեթև-ծանր,սառը-

տաք 5.կարող է գործածել նաև մակբայաբար՝թեթև շնչել,շատ բարձր խոսել

Հարաբերական ածականները որպես կանոն չունեն այս հատկանիշները

Հարաբերական ածականների հատկանշի իմաստի մեջ առկա են տարբեր հարաբերություններ:Թվենք առավել կարևորները՝

1.Հարաբերություն այն առարկայի նկատմամբ , որից պատրաստվել ,առաջացել է տվյալ առարկան . քարե(սանդուղք),հողե( խրճիթ),երկաթյա (կողպեք)

2.Հարաբերություն այն առարկայի նկատմամբ ,որի համար նախատեսվում է ,որին ծառայում,հատկացվում է բնորոշվող առարկան. մանկական առողջարան,բանվորական ակումբ,ուսանողական տոմս

3.Հարաբերություն այն առարկայի նկատմամբ, որը ստեղծում, առաջացնում է բնորոշվող առարկան

4.Հարաբերություն այն առարկայի նկատմամբ , որի մեջ գոյություն ունի ,որին հատուկ է բնորոշվող առարկան.ինչպես՝ գարնանային,ամառային,հունվարյան

5.Հարաբերություն այն առարկայի նկատմամբ, որի ունենալով կամ չունենալով բնորոշվում է տվյալ առարկան.ակնոցավոր,փետրավոր,անպոչ,անգլուխ

6.Հարաբերություն այն առարկայի նկատմամբ ,որի նկատմամբ բնորոշվում է տվյալ առարկան. ալիքաձև,աղեղնաձև,շղթայաձև

# ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Համեմատության աստիճանները հատուկ են որակական ածականներին, քանի որ սրանք ցույց են տալիս առարկայի համեմատելի հատկություն:Բանն այն է ,որ միևնույն որակային հատկությունը առարկաների մեջ առկա է լինում տարբեր չափով ,և դա արտահայտվում է լեզվական համապատասխան միջոցներով:Ինչպես՝

բարձր,բարձրավուն,բարձրագույն,ամենաբարձր,ավելի բարձր,շատ բարձր,քիչ բարձր,նվազ բարձր և այլն: Ինչպես երևում է բերված օրինակներից,առարկայի հատկանշի տարբեր չափերն ու աստիճաններն արտահայտելու համար լեզուն ունի տարբեր միջոցներ,որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝բառակազմական-ձևաբանական, որի մեջ մտնում են բարձր,բարձրավուն,բարձրագույն,ամենաբարձր և վերլուծական-նկարագրական ,որի մեջ մտնում են բոլոր մյուսները:Համեմատության առաջին եղանակը վերաբերում է ձևաբանությանը:Ինչ վերաբերում է մյուսներին ,ապա դրանց նկատմամբ պերտք է ցուցաբերել տարբերակված մոտեցում:Պետք է որոշակիորեն տարբերել լեզվի կառուցվածքի ձևաբանական մակարդակը շարահյուսականից,բառական իմաստը՝ խոսքային իմաստից:Ձևաբանական արտահայտությունը կարող է լինել նաև վերլուծական և արտահայտվել մեկից ավելի բաղադրիչներով:Երկու բաղադրիչները կարող են հանդես գալ որպես մեկ ձևաբանական բաղադրյալ միավորի բաղադրիչներ այն դեպքում,եթե դրանցից գոնե մեկը զրկվել է իր նյութական իմաստից կամ համենայն դեպս պակաս ինքնուրույնություն ունի որպես բառական միավոր և հանդես է գալիս տվյալ հարաբերությունն արտահայտելու համար որոշակի կայուն կիրառությամբ:Այլ է հատկանշի չափ ցույց տվող մյուս բառերի (շատ,քիչ,պակաս,նվազ և այլն ) արժեքը ժամանակակից հայերենում:Եթե հատկանշի առավելական հարաբերություն արտահայտելը առավել-ի միակ կամ համենայն դեպս,հիմնական դերն է ,ապա բերված մյուս բառերի համար հատկանշի հարաբերություն ցույց տալը նրանց տարբեր կիրառություններից մեկն է:Հմմտ. քիչ մեծ,շատ մեծ,բայց և քիչ մարդիկ

Պակաս օգտակար,պակաս խելոք,բայց և պակաս նշանակություն,պակաս դեր չունենալ,բերքը պակաս,պակասը լրացնել…

Ավելացնենք որ պակաս և նվազ բառերը կարող են գործածվել քիչ թվով ածականների հետ:Այսպես,սովորաբար չի ասվում՝ պակաս սև,պակաս վատ,նվազ վատ,պակաս քնքուշ,պակաս փոքր,նվազ փոքր,պակաս համեստ :Վերջապես նշված բառերը (շատ,քիչ,պակաս,նվազ)ունեն համեմատության աստիճաններ՝ ավելի շատ,ամենաշատ,ավելի քիչ,ամենաքիչ,ավելի պակաս,ամենապակաս,ավելի նվազ,ամենանվազ ,որը խոսում է նրանց իմաստի նյութականության և բառական ինքնուրույնության մասին:Մինչդեռ ավելին միշտ նույն ձևով ,առանց փոփոխության գործածվում է ածականի հետ որպես նրան աստիճանի երանգ տվող սպասարկու բաղադրիչ:Պետք է տարբերություն դնել առարկայի հատկանշի արտահայտման միջոցների ու եղանակների միջև,դրանց մեջ տարբերել բառական քերականականը, խոսքային-նկարագրականից կամ շարահյուսականից:

Ածականն ունի համեմատության երեք աստիճան՝ 1.դրական

2.բաղդատական

3. գերադրական

1.Ածականի դրական աստիճանը անվանում է առարկայի հատկությունը առանց համեմատության. օրինակ՝լավ,գեղեցիկ,մեծ,փոքր,հաճելի,ծանր և այլն:Ինքնին վերցրած,ածականի այս ձևի մեջ համեմատության իմաստ չկա,և այն իբրև համեմատության աստիճան է դիտվում համապատասխան ձևերի շարքի մեջ նրանց հետ ունեցած հակադրությամբ :Հմմտ. լավ-ավելի լավ-ամենալավ,գեղեցիկ-ավելի գեղեցիկ-ամենագեղեցիկ

2.Ածականի բաղդատական աստիճանը ցույց է տալիս առարկայի տվյալ հատկանշի տարբերությունը այլ առարկայի կամ նույն առարկայի այլ ժամանակ ունեցած հատկանշի համեմատությամբ:Բաղդատական աստիճանը հիմնականում կազմվում է դրական աստիճանի վրա ավելացնելով ավելի բառը:Այդ դեպքում ածականի բաղդատական աստիճանն արտահայտում է տվյալ հատկանշի ավել,առավել լինելու իմաստ:Չպետք է կարծել ,թե տվյալ հատկանշի չափի ավել լինելը բոլոր դեպքերում որպես առավելություն է

դիտվում:Շատ ածականների բաղդատական աստիճանը կազմվում է նաև -ավուն վերջածանցով:Օրինակ ՝ սևավուն,կարմրավուն



Առարկայի հատկանշի տարբեր չափերի գաղափարը կարող է արտահայտվել ոչ միայն ածականի բաղդատական աստիճանով,այլև նկարագրական ու շարահյուսական տարբեր միջոցներով:Դրա համար հաճախ գործածվում են հետևյալ բառերն ու բառակապակցությունները՝պակաս,նվազ,քիչ,սակավ,

ինչ-որ ,մի փոքր,փոքր-ինչ

Բաղդատական աստիճանն ունի երեք դրսևորում՝ առավելական բաղդատական, նվազական բաղդատական ու հավասարական բաղդատական:

Առավելական բաղդատականը կազմվում է որակական ածականի ուղիղ ձևին առդրելով ավելի բառը (ավելի հզոր), համեմատվող գոյականի բացառական հոլովն առդրելով որակական ածականի ուղիղ ձևին (սիրուց հզոր), քան նախադրության միջոցով և այլն:

Հավասարական բաղդատականն արտահայտում է երկու կամ ավելի առարկաների միևնույն հատկանիշի հավասար աստիճանը, օրինակ՝ Մեր քաղաքը նույնքան գեղեցիկ է, որքան Երևանը: Հավասարական բաղդատականը կազմվում է պես, նման, չափ, ինչպես, որպես կապերի ու կապվող բառի առդրումով ածականի ուղիղ ձևին (օրինակ՝ Մահվան չափ դառն էին այդ րոպեները:), հավասարաչափ, նույնչափ և նման բառերի ու կապակցությունների առդրմամբ ածականի ուղիղ ձևին (օրինակ՝ Երկուսն էլ հավասարաչափ արժանի էին այդ մրցանակին:):

Նվազական բաղդատականը ցույց է տալիս հատկանիշի նվազ կամ պակաս լինելը և արտահայտվում է ածականի ուղիղ ձևին առաջադրելով պակաս, նվազ, քիչ, մի փոքր, մի քիչ և նման բառեր, չափ, պես, նման կապերի ու նրանց խնդիրների առադրմամբ որակական ածականով արտահայտված բաղադրյալ ստորոգյալի ժխտական ձևերին (օրինակ՝ Ձիու չափ արագավազ չէ:):

3.Աձականի գերադրական աստիճանն արտահայտում է տվյալ հատկանշի առավելագույն լինելը մյուս առարկաների կամ նույն առարկայի այլ շրջանների համեմատությամբ:



Ժամանակակից հայերենում գերադրական աստիճանը լինում է երկու տեսակ՝ բացարձակ և հարաբերական գերադրական ձևերի:

Բացարձակ գերադրական աստիճանը ցույց է տալիս նույն հատկանիշների շարքում տվյալ հատկանշի գերազանցությունը այլ առարկաների հանդեպ: Գերադրականի այս աստիճանը հատկանիշի գերազանցությունը վերցնում է ինքնին, ավելի ճիշտ՝ այլ առարկաների նույն հատկանիշի հետ ոչ ուղղակի համեմատությամբ: Օրինակ՝ մեծագույն, շատ գեղեցիկ և այլն:

Հարաբերական գերադրական աստիճանը ցույց է տալիս այդ հատկանիշի լիակատար գերազանցությունը այլ առարկաների նույն հատկանիշի նկատմամբ, օրինակ՝ ամենախոշոր, ամենալավ և այլն:

Գերադրական աստիճանը կազմվում է տարբեր կերպ՝

ամենա- նախածանցով (օրինակ՝ ամենակարճ). այս ածանցով (ի տարբերություն - ագույն վերջածանցի) գերադրական կարելի է կազմել որակական բոլոր ածականներով,

-ագույն վերջածանցով (օրինակ՝ լավագույն),

ամենից, բոլորից բառերի առդրությամբ ածականի ուղիղ ձևին,

գոյականաբար գործածված ածականի հոգնակի թվի սեռական, բացառական հոլովների առադրմամբ նույն ածականի ուղիղ կամ գերադրական ձևերին (օրինակ՝ մեծերից մեծ, մեծերից մեծագույնը),

Գերադրական իմաստ է դրսևորվում այն դեպքում,
երբ նախադասության ստորոգյալը ժխտական խոնարհման է, իսկ ածականը բաղդատական աստիճանի (օրինակ՝ Չկա դրանից ավելի հարմար տարբերակ:), կամ երբ նախադասությունն ունի հարցական բնույթի որևէ բառ, իսկ ածականը բաղդատական աստիճանի է (օրինակ՝ Ի՞նչ կա ջրից ավելի թանկ:):

Ածականակերտ ամենա, գույն, գին ածանցները այլ դեպքերում նաև արմատներ

են: Այսպես՝

• գին գոյականը չպետք է շփոթել գին ածանցի հետ.
դառնագին բառը նշանակում է խիստ դառն. այստեղ գին-ը ածանց է, իսկ փրկագին նշանակում



է փրկելու գինը. այս դեպքում գին-ը արմատ է,
• ամենա և գույն բաղադրիչներով ածականները ոչ միշտ են ցույց տալիս գերադրական աստիճան, օրինակ՝ ամենամեծը նշանակում է բոլորից մեծ. սա գերադրական աստիճան է, իսկ ամենագետ-ը նշանակում է ամեն ինչ իմացող. այստեղ ամեն-ը արմատ է, լավագույն նշանակում է ամենից լավ. սա գերադրական աստիճան է, իսկ վարդագույն-ը նշանակում է վարդի գույն ունեցող. այստեղ գույն-ը արմատ է,

## Ուշադրություն

Գերադրական աստիճան կազմող ամենա և գույն ածանցները միաժամանակ միևնույն բառի հետ գործածելը սխալ է. կարելի է ասել խստագույն կամ ամենախիստ, բայց չի կարելի ասել ամենախստագույն.

Ածականների շարահյուսական կիրառությունը

Ածականը նախադասության մեջ կարող է լինել՝

1.Որոշիչ (Ձինջ երկնքում լողում էր ամպի մի կտոր:)

2.Ստորոգելի (Մեր դպրոցի շենքը եռահարկ է: )

3.ձևի պարագա (Նավակը մեղմ սահում էր ջրի վրա:)

Այս վերջին կիրառությամբ ածականը կատարում է մակբայի դեր:Ածականը փոխանվանաբար կիրառվելիս կարող է գոյականի նման հոլովվել,հոգնակի դառնալ,որոշիչ հոդ ստանալ՝ կատարելով գոյականին բնորոշ պաշտոններ:

Փոխանունությունն այն է,երբ լրացումը փոխարինում է զեղչված լրացյալին՝կատարելով նաև նրա դերը և ստանալով նրա քերականական հատկանիշները:Փոխանուն ածականի

դեպքում ածական որոշիչը փոխարինում է որոշյալին՝արտահայտելով նաև նրա իմաստը:Օրինակ՝Տնօրենը պարգևներ հանձնեց ավարտական դասարանի գերազանցիկ և հարվածային աշակերտներին. գերազանցիկներին (գերազանցիկ աշակերտներին)՝երկուական գիրք,հարվածայիններին



(հարվածային աշակերտներին)՝մեկական:

Կան մի շարք բառեր /անդորր,ժլատ,խավար,հերոս,մութ ,որբ,սխալ,սուտ,ցուրտ,դպրոցական,հրշեջ և այլն), որոնք իրենց տարբեր կիրառություններում մերթ ածական են (խավար գիշեր,սխալ խոսք,ցուրտ օր, հրշեջ մեքենա) մերթ գոյական (խավարը ցրվեց,ցրտից փայտացավ,հրշեջներ եկան)

# Հավելված

## Վարժություններ

1. Ընդգծե՛ք 5 պարզ ածական.

ա. կլոր, ալեկոծ, կույր, աղվես, աներ, մերկ, անգործ, կարճլիկ, կաղ, տկլոր

բ. համերաշխ, բոբիկ, քաջ, անայլայլ, անուրջ, հզոր, երկար, կռինչ, կարճ,

անագ գ. սև, գաթա, խրոխտ, բոլոր, նեղ, հաստ, դաշտ, նոսր, կորովի,

մանկուց

2.Ընդգծե՛ք 5 բարդ ածանցավոր ածական.

ա. ծանծաղ, լիարժեք, արյունարբու, մաղձոտ, անխոտոր, մեղրածոր, հայրենադավ, վատառողջ, օրավուր

բ. անապացույց, աներկմիտ, հայելապատ, հասարակ, քարակոփ, անքննադատ, հինավուրց, ժամկետանց, հողմացրիվ, քսանամյա

գ. անթափանց, անկորուստ, կաղնեփայտե, սնոտիապաշտ, գիտակից, նրբահոտ, սառցապատ, բերքառատ, կցկտուր, անվեհեր

3. Ընդգծե՛ք 5 բարդ ածական (առանց ածանցի).

ա. քարաշեն, սկզբնապես, լիտրանոց, բրոնզաձույլ, գահավեժ, հանդարտ, մեծամեծ, թափուր, քաջարի, ճերմակ

բ. խուճուճ, ալեզարդ, հեռաձիգ, հավասար, վեհաշուք, սպիտակ, ձվաձև, կիսախուփ, հարաշեշտ, տարաբախտ

գ. սրճագույն, հետաքրքիր, երկթերթ, առհավետ, սրաքիթ, համընթաց, ստահակ, հավերժ,

պատրաստակամ



Ընդգծե՛ք առարկայի հատկանիշ նշանակող 5 բառ.

ա. անգղ, ցածր, վատ, ավարտ, խոր, գզրոց, մեծագույն, գրոհ, ագահ,

անթեղ բ. ամեհի, գոտի, բույր, կույր, ավյուն, ատյան, ուրախ, ողորկ,

գետին, ծանր

գ. գրտնակ, աշխույժ, լավագույն, ավազան, մանուշակագույն, ապավեն, անջրպետ, առագաստ, համեստ, մեղմ

2. Ընդգծե՛ք 5 ածական.

ա. խոշոր, անձրև, անտառ, քնքուշ, խեղճ, աղանձ, բարձր, գերան, բողոք,

կաղ բ. քաղցր, ավանդ, բլիթ, տխուր, բոբիկ, գուղձ, ամայի, գորգ,

գանգուր, աղմուկ

# Դասի պլան-1

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Ածականի մակդիրային կիրառությունը, գործածությունը գոյականների հետ

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԴԱՍ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՝ 45 ՐՈՊԵ

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ա/ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ՝

✔Ածականի կիրառությունը խոսքում
✔մակդիր
✔մակդիրների գործածությունը գոյականների հետ

Բ/ՍՈՑԻԱԼԱԿԱՆ՝

✔Ստեղծագործելու
✔Համագործակցելու

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք, գրատախտակ,քարտեր

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝ հատվածներ հայ գրականությունից բացիկների տեսքով,սահիկահանդես

ՄԵԹՈԴՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐ՝ ԽԻԿ համակարգ, մտագրոհ, T-աձև աղյուսակ, 5-րոպեանոց շարադրություն, հարց ու պատասխան, խմբային և անհատական աշխատանքներ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ածական, մակդիր

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կիրառվում է ,,մտագրոհ,, մեթոդը: Հարցերը բովանդակում են բառի ուղղակի և փոխաբերական

իմաստների շուրջ:Նախապես հանձնարարված բանաստեղծական հատվածներից, որոնք գրված են



բացիկների մեջ,աշակերտները խմբերով առանձնացնում են փոխաբերական կիրառությամբ օգտագործված բառերը: Ներկայացնում են և ամփոփում աշխատանքը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս փուլում ուսուցիչը հանձնարարում է Т-աձև աղյուսակի երկրորդ թևում գրել փոխաբերական իմատով կիրառված բառերը:Ապա առաջարկում է գրել յուրաքանչյուրի խոսքիմասային պատկանելությունը և համապատասխան ուղղակի իմաստ դաշտում գրել տվյալ բառի ուղղակի իմաստով նախադասություն:

Ուղղակի իմաստ Փոխաբերական իմաստ

Աշխատանքն ամփոփում են: Հարց ու պատասխանի միջոցով ներկայացվում է դասը: Աշակերտները գալիս են այն եզրակացության, որ ածականի փոխաբերական կիրառությունը գոյականների հետ կոչվում է մակդիր: Միասին ընդգծում են արդեն մակդիրները:

ԿԾՌԱԴԱՏՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնարարվում է 5-րոպեանոց շարադրություն ընդգծված մակդիրների շուրջ: Աշխատանքը ներկայացնում են, գնահատվում:

ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քանի որ դասագրքերում բացակայում է <<Ածականի մակդրային կիրառությունը, գործածությունը գոյականների հետ>> թեման, նախապես ուսուցչի կողմից դասը և տնային հանձնարարությունը կազմվում է սահիկահանդեսի տեսքով և ուղարկվում աշակերտների էլ. փոստերին:

Հանձնարարվում է սովորել դասը և կատարել սահիկահանդեսի առաջադրանքը: Այն է՝ դուրս գրել մակդիրները,կազմել նախադասություններ:

Դասի պլան -2

Դասի թեման՝ ածականը որպես խոսքի մաս:

Նպատակները՝

1. Խորացնել, ընդլայնել նախկին գիտելիքները ածականի մասին: Բառապաշարը հարստացնել: 2. Ձևավորել գեղագիտական ճաշակ, գիտելիքը կիրառելու, մտապատկերման և գեղարվեստական խոսք կազմելու կարողություններ:
3. Նախաձեռնական վերաբերմունք ձևավորել:

Մեթոդը՝ զրույց, ընդհանուր հարց ու պատասխան, խմբային աշխատանք, ճանաչողական և կիրառական վարժություններ,նկարով շարադրություն:

Ընթացքը

Դասն սկսել հետաքրքիր զրույցով. <<Մարդու մեջ ամեն ինչ պետք է լինի գեղեցիկ>> թեմայով մի փոքր զրույց է անցկացնում ուսուցիչը: Զրույցի թեման տալուց հետո լսում է աշակերտներին, որոնք հերթով ներկայացնում են իրենց ծանոթ մարդկանց, մայրիկների, ընկերների ինչպիսին լինելը: Նշում են բնութագրական բառերը:

· Հիշում են բանաստեղծություններ, առանձնացնում հատկանիշ արտահայտող բառերը: Երեխաներն արդեն ծանոթ են այդ խոսքի մասին միջին դասարաններիցև լրացվում նոր բառերով:
· Զույգեր են կազմում՝ ըստ նշված հատկանիշի:(Աշակերտներից ամեն մեկը աշխատում է գտնել մեկ ուրիշին, որն ինչ-որ հատկանիշով նման է իրեն):
· Զույգերն ընթերցում են ուսուցչի հանձնարարած նոր քարտերը՝ փոքրածավալ բնապատկերների նկարագրությամբ:
· Հիշում են բանաստեղծություններ, առանձնացնում հատկանիշ արտահայտող բառերը: Երեխաներն արդեն ծանոթ են այդ խոսքի մասին միջին դասարաններիցև լրացվում նոր բառերով:
· Զույգեր են կազմում՝ ըստ նշված հատկանիշի:(Աշակերտներից ամեն մեկը աշխատում է գտնել մեկ ուրիշին, որն ինչ-որ հատկանիշով նման է իրեն):
· Զույգերն ընթերցում են ուսուցչի հանձնարարած նոր քարտերը՝ փոքրածավալ բնապատկերների նկարագրությամբ:
1. Ծեր որսորդը արծվենի հայացքով նայեց դիմացի բարձր սարի կատարին, ձյան շերտից վերև, ավելի բարձր՝ կապույտ ֆոնի վրա, ահագին եղջյուրներով մի գլուխ էր երևում: Վայրի խոյն էր, որ հսկում էր իր հոտին:

Որսորդը գաղտագողի դուրս եկավ կենդանու թիկունքը ու կանգնեց ամենաբարձր տեղում:

2. Այծենասարի հետևից ծագեցին արևի առաջին ճառագայթները, և հրափայլ արեգակը ոսկեզօծ ափնաձիր լեռները: Բայց ամենագեղեցիկ ու դյութիչ տեսարանը ներկայացնում էր ծովակը: Գեղեցիկ կոհակները



վետվետում էին՝ փայլփլելով արևի տակ: Ավելի գեղեցիկ էր ծովակի ամբողջ հայելին՝ իր շրջափակ լեռներով ու ժայռերով:

Նման քարտեր ստանում են բոլոր զույգերը:

Զույգերով աշխատելով՝ դիտարկում են տեքստերում եղած այն ածականները, որոնք բնութագրում են տարբեր առարկաներ, բայց միևնույն հատկանիշը տարբեր առարկաներ ունեն տարբեր չափով:

Աշակերտներն ընդգծված ածականների համեմատությունից եզրահանգում են կատարում և սահմանում գիտելիքը՝ որակական ածականի համեմատության աստիճանների մասին:

Ուսուցչի օգնությամբ աշակերտներն իրենք են որոշում համեմատության երեք աստիճանները, ինչպես նաև դրանց կազմությունն ու իմաստային տարբերությունները

## Առաջադրանքներ

# Առաջադրանք 1

Կազմել հարաբերական ածականներ տրված գոյականներից՝
գիշեր, գյուղ, քար, ոսկի

# Առաջադրանք 2

Տրված հատվածից դուրս բերել ածականներ.

Այս գիշեր տեսա մի անուշ երազ.
Ես իմ հայրենի տունն էի նորոգում,
Մանկության երկինքն էր բացվել վրաս,
Եվ արշալույսներ կային իմ հոգում:
Այնտեղ էր մայրս, հայցքը պայծառ,
Մայրենի լեզվով խոսում էր առուն,
Խշշում էր բակում հինավուրց մի ծառ...
Այնպես ծանո՞թ էր և այնպես գարու՞ն...
Երդիկից կաթաց շողն արեգական
Թվում էր հոգուս ոսկյա բանալի,
Արևն էր նայում աչքով մայրական,
Եվ քաղցր էր աշխարհն ու հասկանալի...

Նաիրի Զարյան

# Առաջադրանք 2

Այս գիշեր տեսա մի անուշ երազ.
Ես իմ հայրենի տունն էի նորոգում,
Մանկության երկինքն էր բացվել վրաս,
Եվ արշալույսներ կային իմ հոգում:
Այնտեղ էր մայրս, հայացքը պայծառ,
Մայրենի լեզվով խոսում էր առուն,
Խշշում էր բակում հինավուրց մի ծառ...
Այնպես ծանո՞թ էր և այնպես գարո՞ւն...
Երդիկից կաթած շողն արեգական
Թվում էր հոգուս ոսկյա բանալի,
Արևն էր նայում աչքով մայրական,
Եվ քաղցր էր աշխարհն ու հասկանալի...

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս թեմայի շնորհիվ հասկանալի դարձավ, որ մանկավարժությունը ենթադրում է ոչ միայն գիտելիքներ, կարողություններ, այլ նաև վարպետություն:

Կրթության բնագավառում անընդհատ տեղի են ունենում փոփոխություններ, և այդ փոփոխություւները բխում են ժամանակի պահանջներից: Որպեսզի ձեռք բերենք մանկավարժական փորձ, պետք է հստակ իմանանք ուսուցման մեթոդները: Այսօր ի հայտ են եկել նոր կամ ժամանակակից մեթոդներ: Իհարկե չի կարելի անտեսել ավանդական մեթոդները,
որովհետև ամեն մի նոր բան կառուցվում է հնի վրա: Պահպանելով հինը՝ ստեղծում ենք նորը: Առաջ քաշված մեթոդների շնորհիվ փոխվում է նաև ուսուցչի աշխատանքը: Նա դասի նյութը հաղորդողից դառնում է դասի մասնակից, օգնող, ուղղորդող:

Հենց այս թեմայի շնորհիվ, դիտարկված օրինակների շնորհիվ աշակերտը ձեռք կբերի տրամաբանորեն մտածելու կարողություն, կարողունակություններ ( կոմպետենցիաներ), մտքերը ճշգրիտ և պարզ արտահայտելու ունակություններ, կարևորն ու երկրորդականը զանազանելու, ընդհանրացումներ անելու հմտություններ, ինչպես նաև ստեղծագործական ունակությունների զարգացում:

Ամփոփելով վերը նկարագրվածը՝ յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է դիմակայել հանրակրթության մարտահրավերներին և բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունվետությունը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974:
2. Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1983:
3. Հովհ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու 7-րդ դասարան, Երևան, 2016: 4. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, 2008թ.: